



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստան համահայկական հիմնադրամ
Հասարակութան հետ կապերու բաժին
Հեռ: + (374 10) 521505

pr@himmadram.org

www.himmadram.org

Մամուլի հաղորդագրություն

Տաուշի Դիտաւան գիւղին մէջ ծառերը պիտի չհատն այլեւս նոր կազաբաշխման համակարգ կառուցելու շնորհիւ

Երեւան, 15 ապրիլի, 2009 թ.: «Հայաստան» համահայկական հիմնադրամին շարունակական ջանքերուն շնորհիւ Դիտաւան գիւղը այսօր ապահովուած է կազով: Ազրաբէյճանին սահմանակից Դիտաւան գիւղի բնակիչները, 120 ընտանիք, արցախեան պատերազմի տարիներուն մեծ զոհողութիւններով ու լուրջ դժուարութիւններ յաղթահարելով պաշտպանեցին իրենց գիւղը, տունը եւ ընտանիքը: Սակայն պատերազմին յաջորդած տարիներու նոր դժուարութիւնները, վառելիքի պակաս, քայքայուած գիւղատնտեսութիւն եւ այլն, գիւղացիներուն հարկադրեցին օգտագործել շրջակայ հարուստ բնութեան ընձեռած հնարաւորութիւնները:

Գիւղը յայտնի է իր գեղեցիկ բնութեամբ եւ հիւրասիրութեամբ: Գիւղին սովորութիւնները եւ բնութեան հրաշալիքները հիացմունք պատճառեցին համայնքին եւ անոր խնդիրներուն ու դժուարութիւններուն մօտէն ծանօթանալու նպատակով 2007 թուականի սկզբին Դիտաւան այցելած արժանոյնահայ բարերարներ Արմէն եւ Նատիա Էքսերճեաններուն, որոնք մեծապէս տպաւորուած եւ ազդուած՝ որոշեցին հովանաւորել Դիտաւան գիւղի բարեկարգմանը եւ զարգացմանը միտուած բոլոր ծրագրերը: Առաջինը եւ ամենակենսականը ջեռուցման, վառելիքի բացակայութեան խնդիրն էր, որուն հետեւանքով ճարահատ գիւղացիները կը կտրէին մօտակայ անտառի ծառերը, այդ կերպ վնասելով բնութեանը եւ վտանգելով գիւղին ապագան: Կազաբաշխման համակարգի կառուցումը լուծեց այս կենսական խնդիրը: Արմէն եւ Նատիա Էքսերճեաններու աջակցութեամբ վերանորոգուեցաւ նաեւ վարչական շէնքը, որուն բաղկացուցիչ մասերն են գիւղի բժշկական եւ մշակութային կեդրոնները: Դիտաւան գիւղին մէջ կազմակերպուեցաւ մեծ հանդիսութիւն, նշելու համար երկու նախագիծերուն աւարտը: Հանդիսութեանը ներկայ էր նաեւ Արմէն Էքսերճեանը, որուն համար յուզիչ անակնկալ մըն էր գիւղի գլխաւոր հրապարակը Էքսերճեաններուն անունով կոչելու հանգամանքը: Դիտաւանցիները պարոն Արմէնին յանձնեցին «Պատուաւոր դիտաւանցի» պատուոյ վկայականը:

Դիտաւանցիներուն շնորհաւորելու նպատակով հանդիսութեանը մասնակցեցան նաեւ Հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնատար Արա Վարդանեանը եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք հաւաստեցին, որ կատարուած աշխատանքը պիտի ըլլայ շարունակական, որովհետեւ Ազրաբէյճանին սահմանակից գիւղի բնակիչները, իրենց նուիրուածութեամբ եւ քաջութեամբ Հանրապետության սահմանները միշտ պահած են անառիկ եւ ըստ այդմ պետք է գնահատուին:

Գիւղին մէջ կազի առկայութիւնը կը լուծէ շատ խնդիրներ, ինչպէս նաեւ բնութեան պահպանութեան հարցը, որովհետեւ արդ գիւղացին ծառ կտրելու կարիքը չունի: Իսկ վերանորոգուած վարչական շէնքը դարձաւ բոլորի հպարտութեան աղբիւրը, որովհետեւ այդ շրջաններուն մէջ ան միակն է:

Բոլոր գիւղացիներուն տրամադրութիւնը բարձր էր հանդիսութեան օրը: Անոնք երկար ժամանակ է ուրախութիւն չէին տեսած եւ այսքան համախմբուած չէին եղած: Տօն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյք չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունեութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 15 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ:

Երևալու գիւղապետին համար եւ նշանակալից հանդիսութիւն: Ան նշեց որ շուտով Զիննադրամին հետ կը սկսին քննարկել եւ կը փորձեն իրագործել ջրաբաշխման համակարգ կառուցելու ինքիւրը, եւ ուրախութիւն յայտնեց որ այդ աշխատանքներուն ինք պիտի հետեւի նոր եւ արդիական գրասենեակէն: